տօնել զտօն Մաղկազարդի · և 'ի 13 Ապրիլի յաջորդ Կիրակէի՝ զՋատիկն։ Վասն զի վաղեմի սովորութիւն լեալէր 'ի մէջ Հայոց և Յունաց յերեկոյի Ճրագալուցի Պասեքին ժողովիլ ուխտաւորաց խուռն բազմութեամբ 'ի տաճարին Ս · Յարութեան, և յաղագս կատարելոյ զխնդիս Լուսաւորութեան՝ Պատրիարքունք երկուց ազգաց 'ի միասին մտանէին 'ի Գերեզմանն Քրիստոսի։

Իսկ 'ի սին ամի յանջատիլ տօնին՝ տարակուսեալ կային երկոքին կողմանքն թէ ո՞րպիսի եղանակաւ հնար լիցի նոցա կատարել զայն, և թէ յո՞ր վախճան ունէր եղերիլ գործն · զի քաջ գիտէին 'ի պատմութեանց, թէ ո՞րքան խռովութիւնք և աղմուկք լեալ են յառաջին ժամանակս վասն այսր տօնի, մինչեւ հեղուլ զարիւնս միմեանց, առիթ լինելով տարապարտ մահուան ոմանց։ Նմին իրի՝ Գրիգոր Պատրիարք երկնէր և խորհէր հանապազ 'ի սրտի իւրում թէ ո՞րպէս կարող լիցի զերծուցանել զիւրան 'ի վտանգէ աստի, եւ կանխէր աղօթիւք առ Աստուած զի խաղաղութեամբ և առանց մեծի վնասու վճարեսցէ զայն։

Իսկ միաբանք Յունաց իրաղեկ լեալ այսմ՝ սկսան երթեւեկել առ նա, մերթ յայտնի և մերթ 'ի ծածուկ՝ հընարէին որսալ բան ինչ 'ի բերանոյ նորա։ Այլ նա ըստ բնաբոյս բարուց իւրոց՝ խոնարհութեամբ և խաղաղական սիրով առնէր նոցա պատասխանի · զի կարի դժուարին և ծանր է խնդիրս ասէ · միայն աղաչեսցուք զԱստուած, զի ինքն ըստ բարի կամաց իւրոց առաջնորդեսցէ 'ի բարին · հանապազորդ կանխել յաղօթս, և խաղաղութեամբ անցուցանել զժամն։ Եւ յամսեանն Նոյեմբերի դարձեալ եկին գլխաւորք միաբանացն Յունաց առ Գրիգոր Պատրիարք, եւ յետ այլոց բանից՝ իբրեւ բանք եղեն նաեւ վասն յառաջակայ տօնի Զատկին, ասեն ցԳրիգոր · Հայր վարդապետ, գիտեմք զի այր Աստուծոյ ես դու, և սիրող խաղաղութեան, և ոչ են կամք քո բանալ զդուռն խռովութեան 'ի մէջ երկուց ազգացս։ Ահա մերձեցաւ տօն Պասեքին, եկեալ եմք առ քեզ, խնդալ զմիաս քո, որպէս կամիս և զի՛նչ հրաման առնես մեզ։ Ետ պատասխանի Գրիգոր և ասէ · գիտեմ, զի ազգ ճոխ և փարթամ էք դուք և աւագագոյն քան զմեզ, և անհնարին է զիջանիլ ձեզ և